

ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու հանգամանքները (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն):

### **2.3. Դատական ծախսերը**

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:*

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:*

Այս պարագայում, նկատի ունենալով, որ հայրը ենթակա է մերժման, իսկ դատական ծախսերը բաշխվում են բավարարված հայցապահանջների համամասնորեն, բացի այդ հայցվորը նախապես վճարված պետական տուրքի գումարի բռնագանձման պահանջ չի ներկայացրել, ուստի դատարանը գտնում է, որ նախապես վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ինչ վերաբերում է դատական ծախս փաստաբանի խելամիտ վարձատրությանը, ապա հայցվոր կողմը նման պահանջ չի ներկայացրել, ուստի այդ հարցը ևս պետք է համարել լուծված:

### **3. Եզրափակիչ մաս**

*Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101, 105, 109, 189, 191, 192, 198, 210-214 և 360-362 հոդվածներով դատարանը*

**Վ Ճ Ռ Ե Ց**

1. <<Կվալիտ Շին>> ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ի դեմս Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից 20.10.2022թ-ին կայացված թիվ 168-Ա որոշումը՝ <<Կվալիտ Շին>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին հայրը մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով:

2. Որպես դատական ծախսեր՝ նախապես վճարված պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության հարցերը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

4. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ**



**ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ**